

Մարինե Պ. Սարգսյան

**ՀԱՅԵՐԵՆ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՏՊԱԳԻՐ
ՀԻՇՏԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ**

Եվ հիշատակարանային բնույթի միավորները*

Բանալի բառեր – հնատիպ գիրք, հայերեն, հիշատակարան, ձեռագիր, տպագիր, վերնագիր, տպարան, տպագրիչ-հրատարակիչ:

Մեր նախորդ հոդվածում անդրադարձել ենք հայերեն հնատիպ գրքերի¹ հիշատակարանների, բնագրերի հրատարակման հարցերին, որտեղ, որպես ուղեցույց ընդունելով ձեռագիր մատյանների, հիշատակարանների բնագրագիտական մշակման սկզբունքները, առաջարկել ենք դրանց տպագրության մեր տարբերակը²:

Մեր թեկնածուական ատենախոսությունն առիթ տվեց զուգահեռաբար սկսելու հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների ժողովածուի³ պատրաստումը՝ առաջնորդվելով հիմնականում «Հայ գիրքը» մատենագիտության առաջին հատորով⁴: Այստեղ առկա հիշատակարանները և նմանաբնույթ միավորները ստուգել-համեմատել ենք նկարագրությունների հիմք-գրքերի հետ⁵: Տարբեր պատճառներով որոշ գրքեր մա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.03.2024:

1 Այսուհետև «գիրք-գրքեր» ձևով բնորոշելու ենք հնատիպ գրքերը՝ առանց «հնատիպ» բառն ամեն անգամ գրելու:

2 Տե՛ս **Սարգսյան Մ. Պ.**, Հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների բնագրերի մշակման հարցեր, Էջմիածին, 2017, ԺԱ., էջ 143-146:

3 Հնատիպ գրքերի տպագիր հիշատակարանների ժողովածու պատրաստելու գաղափարը տվել է վերջերս երկրային կյանքին հրաժեշտ տված Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ **Գևորգ Տեր-Վարդանյանը**:

4 Տե՛ս Հայ գիրքը 1512-1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, [կազմեցին՝ **Ռսկանյան Ն. Ա., Կորկոտյան Բ. Ա., Սավալյան Ա. Մ.**, Եր, 1988 (այսուհետև՝ «Հայ գիրք»):

5 Հիմք-գիրք ասելով նկատի ունենք նրանք, որոնցից «Հայ գիրքն» արել է նկարագրությունը (գրքի հնատիպ օրինակը տեսած չլինելու դեպքում «Հայ գրքում»՝ Ծնթ.-ում, նշվում է, թե որ աղբյուրն է նկարագրության հիմքը): Ի դեպ, միևնույն հիշատակարանը տարբեր աղբյուրներում (մամուլում կամ մատենագիտական

տենագիտության կազմողներին հասու չեն եղել, ուստի նրանք այդպիսիք նկարագրել են միջնորդաբար կամ, այլ տեղեկություն չունենալով, բավարարվել են գրքի գոյության փաստը արձանագրելով: Հետագայում այդ գրքերի մի մասը համացանցով⁶ հասանելի դարձավ, և կարողացանք նյութն առնել բուն աղբյուրներից՝ գրքերից:

Ի տարբերություն ձեռագիր մատյանների, որտեղ հստակ տարրորոշվում են հիշատակարանները, գրքերում պատկերն այլ է, հաճախ էլ՝ տարակարծությունների տեղիք տվող: Բացի բուն հիշատակարաններից, գրքերում կան միավորներ, որոնք տարբերվելով իրենց անվանումով, բովանդակությամբ, երբեմն նաև կառուցվածքով և հաճախ հիշատակարանային տվյալներ պարունակելով, մոտենում են հիշատակարաններին, ուստի վերջիններս համարել ենք հիշատակարանաբնույթ միավորներ:

Ժամանակի և տեղի խնայողության համար շրջանցենք հիշատակարանի բոլորիս հայտնի բնորոշումը⁷, փոխարենը քննենք մեր՝ գրքերի հիշատակարանաբնույթ միավորներ համարած հատվածների այսօրինակ բնորոշման պատճառները, բուն հիշատակարանների հետ նրանց ունեցած առնչությունները, մեր առջև ծառայած խնդիրները՝ ցույց տալով գրքերի այդպիսի մասերը մեր կազմելիք ժողովածուի մեջ ընդգրկելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրքերի՝ «Յիշատակարան» խորագիր ունեցող կամ չունեցող, հիմնականում վերջում դրված հատվածներից բացի, կան տարբեր վերնագրեր ունեցող և գրքերի տարբեր մասերում՝ հիմնականում սկզբում, երբեմն՝ բնագրերի միջև⁸ դրված միավոր-

տարբեր աշխատություններում) ունի ուղղագրական, երբեմն էլ բառային տարբերություններ: Պատճառները տարբեր են՝ անուշադրություն, սխալ արված բառանջատում, պատվի նշանով գրված բառերի ոչ ճիշտ ընթերցում և այլն:

6 Նկատի ունենք հիմնականում Հայաստանի ազգային գրադարանի (nla.am) և Հայաստանի ԳԱ հիմնական գրադարանի (flib.sci.am) կայքերը: Հարկ եղած դեպքում օգտագործել ենք նաև Մատենադարանի գրադարանի բնօրինակ գրքերը, իսկ որոշ գրքերի անհրաժեշտ հատվածները հաջողվել է այդ պահին դրսում եղած մեր աշխատակիցների միջոցով ձեռք բերել, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

7 Այս մասին Տե՛ս **Խաչիկեան Լ. Ս.**, Աշխատություններ, հատ. Ա, Եր, 1995, էջ 334-372 (ԺԷ. դ. հայերէն ձեռագրերի յիշատակարանների առաջին հատորը). **Մաթևոսյան Ա. Ս.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրներ, Եր, 1998. **Հարությունյան Խ. Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր, 2019. և այլն:

8 Երբեմն հանդիպում են գրքի սկզբում դրված հիշատակարաններ. Այսպես՝ լուսանկարով նկարագրված «Հայ գրքի» Հնր 115 (էջ 85) Տաղարանի հիշատակարանը սկզբում է, հաջորդում է ցանկը, այնուհետև՝ տաղերը: Ցավոք, գիրքը տեսնել և պարզել չենք կարող, արդյո՞ք ունի «Յիշատակարան» խորագիրը, թե՞, որ առավել հավանական է, ավելացրել են Հայ գրքի մատենագիտությունը կազմողները

ներ, որոնք հիշատակարանաբնույթ են և ունեն հիշատակարաններին բնորոշ հատկանիշներ: Խոսքը Հայ գրքի մատենագիտությունը կազմողների վերականգնած՝ «Հիշատակություն», «Հիշատակագրություն», «Մաղթանք», նաև՝ գրքերում առկա «Առաջաբան»⁹, «Առ ընթերցողս», «Ծանուցում...», «Տրակ առ ընթերցողս», «Պատճառ և նախերգանք գրոցս» և նման այլ խորագրերով միավորների մասին է: Հայ գրքի մատենագիտությունը կազմողների առաջարկած առաջին երեք անվանումները խնդրահարույց չեն. այդ խորագրերով միավորներն առանց մտորելու կարելի է և հիշատակարան համարել, մանավանդ, որ այդպիսիների և հիշատակարան համարվող միավորների միջև առայսօր իմաստային հստակ սահմանազատում արված չէ¹⁰: Սրանք համարժեք են «ձեռագրերի լուսանցքներում և բացատներում»¹¹ կամ առանձին բնագրերի վերջում գրված փոքրածավալ հիշատակագրություններին, որոնք հիմնականում ունեն գրչության ընթացքին վերաբերող տեղեկություններ և որոնք այս դեպքում վերարտադրվել են նաև հնատիպ գրքերի մեջ: Օրինակ՝ «Հայ գրքում» հիշատակագրություն են համարվել **«Յիշեսցի՛ր ի մաքրափայլ յաղօթս ձեր, ո՛վ հանդիպօղբ, գաշխատողս ի սմա»**, **«Ազնեա՛, Սո՛ւրբ Հոգի, աշխատողացս»**, **«Մաղնոս ի Դաւիթ. Ազնեա՛, Սո՛ւրբ Հոգի, հասանել յաւարտ»**, **«Զաշխատողս ի սմա՝ զնուստ Խաչատուր վարդապետս եւ զվարպետ Յակոբճանն, և զյանապատիս միաբանքն, որ բազում աշխատութեամբ հազիւ կարացաք զայս չափս ի յայտ բերել թվին ՌՁԷ. (1638)»** («Հայ գիրք», Հ^մ 30, էջ 22), կամ «Տ-

(հատվածի բովանդակությունը լիովին հիշատակարանային է): Իսկ Հւր 223 (էջ 159) Ժամագրքի «Յիշատակարան Ժամագրգկանս» և Հւր 84 (էջ 66) Սաղմոսարանի «Ծանուցում առ ընթերցողս» (շարադրանքը կրկին հիշատակարանային է) միաւորներից հետո, ևս մի քանիսում կան 5 էջանոց այլ բնագրեր, որոնք հիմնականում ունեն «Կարգ և թիւք և անունք կաթողիկոսացն...» սկսվածքներ, Հւր 98 (էջ 75) «Գրգուկ...»ի հիշատակարանից հետո կա 1 էջանոց աղոթք, Հւր 141 (էջ 107) «Գիրք ժողովածոյ»ի հիշատակարանից հետո ցանկն է, կամ Հւր 399 (էջ 311) հիշատակարանից հետո կա չափածո մի բնագիր. և այլն: Ասվածի վառ օրինակ է նաև 1706 թ. Պոլսում Գրիգոր Մարզվանեցու տպագրած «Հայսմավորք»-ը («Հայ գիրք», Հւր 227, էջ 162), որտեղ գրեթե յուրաքանչյուր միավորից հետո կան փոքրածավալ հիշատակարաններ:

9 Ի դեպ, դեռևս ձեռագիր գրքերում այս և նման խորագրերով հատվածները հիշատակարանային տարրեր ունեին. «Եթե Ե. (5) և հաջորդ դարերից մեզ ամբողջական ձեռագրի հիշատակարաններ չեն հասել, ապա այդ ժամանակներից մենք ժառանգել ենք հարուստ մատենագրություն, որոնց **առաջաբանները** (ընդգծումը մերն է) կամ խորագրերը հիշատակարանային տվյալներ են պարունակում մասնավորապես երկի բնույթի, հեղինակի ու ստացողի մասին: Այդ առաջաբանները կոչվում են տարբեր անուններով – «Առաջաբանութիւն», «Նախագիտելիք», «Նախերգան», «Նախագիր», «Ներածութիւն» և այլն» (Տէն Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ. դդ., աշխ.՝ **Մաթևոսյանի Ա. Ս.**, Եր, 1988, էջ ԺԱ.):

10 Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Սարգսյան Մ. Պ.**, նշվ. հոդ.:

11 **Բախշինյան Հ. Գ.**, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Եր, 1980, էջ 41:

պեցաւ սաւատս ի Նոր Զուղա, ի թուին հազար հարիւր քառասուն և երկու (1691), և յամենան Մայիսի ի մէկն» («Հայ գիրք», Հ^մ 152, էջ 114) և բազում նման փոքր հատվածներ, որոնք «Հայ գիրքը» կազմողները կարող էին նաև հիշատակարան համարել: Կամ, հակառակը, հիշատակարան է համարվել մի հատված, որը, հաշվի առնելով փոքր ծավալը, կարելի է և հիշատակագրություն համարել¹². **«Ժտենք յընթերցողացդ անմեղադրելի առնել զմեզ ի սղալանացն, զի ոչ ի բազմաց օրինակաց ստուգեցաք, վասն զի ոչ գտանէին աստ, այլ ի միոյ օրինակէ, որ ինչ գրեալ էր, փոխադրեցաք աստ, որպէս և խնդրեալ եղև յոմանց»** («Հայ գիրք», Հ^մ 67, էջ 54. նաև՝ Հ^մ 69, էջ 55, Հ^մ 151, էջ 114, Հ^մ 152, էջ 114, Հ^մ 183, էջ 135, Հ^մ 136, էջ 103)¹³. և այլն: Այսպիսով, սրանք խստիվ սահմանազատելի չեն և հաճախ են հանդես գալիս մեկը մյուսի փոխարեն:

ԺԷ. դ. 40-ական թթ. գրքերում հիշատակարաններին զուգահեռ երևան են գալիս հիշատակարանային տվյալներ պարունակող վերը նշված և այլ նման խորագրեր ունեցող հատվածներ, որոնց մեջ խոսվում է տպագրության ընթացքի, հանդիպած դժվարությունների, ժամանակի հոգևոր և աշխարհական իշխողների և այլնի մասին: Հենց սրանք էլ մեր ներկա քննության նյութն են, և պետք է պարզենք՝ սրանցից որոնք պետք է հիշատակարան համարենք և որոնք՝ ոչ:

«Ծանուցում...» անունով հատվածները «Հայ գիրքը» կազմողներն իրենք իսկ երբեմն հիշատակարան են համարել, երբեմն՝ ոչ. օրինակ «Հայ գրքի» Հ^մ 37՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գրքի վերջի «Ծանուցում պայծառ ընթերձողաց» խորագրով հատվածը համարել են հիշատակարան (նաև՝ Հ^մ 33, էջ 24, Հ^մ 37, էջ 27, Հ^մ 47, էջ 35. և այլն): Բացի այս, հայերեն հնատիպ գրքերով զբաղված այլ հեղինակներ ևս այս միավորների մի մասը հիշատակարան են համարել: Հաշվի առնելով այս երկվությունը, ինչպես նաև վերը թվարկված միավորների և հիշատակարանների միջև բովանդակային ընդհանրությունները, այս տեսակ խորագրերով հատվածների զգալի մասը ներառել ենք մեր ժողովածուի մեջ (թե ինչ բովանդակություն ունեն դրանք, տե՛ս ստորև): Շատ անգամ հնատիպ գրքերում զուգահեռ գոյակցում են նմանաբնույթ միավորները և բուն հիշատակարանները (օր.՝ Հ^մ 33, էջ 24, Հ^մ 51, էջ 39, Հ^մ 131, էջ 97. և այլն):

Կան հնատիպեր, որոնք բուն հիշատակարանը չունեն, փոխարենը տպագրությանը վերաբերող զանազան տեղեկություններ տրված են

12 Հիշատակագրություն և հիշատակարան եզրերն ընդհանուր առմամբ նույն երևույթի տարբեր անվանումներն են: Այստեղ նման տարբերակումն արված է ծավալի փոքրությունը հաշվի առնելով:

13 Վերջինիս «Ծանուցում» համարված հատվածը կարելի է հիշատակարան համարել:

միայն հիշատակարանաբնույթ միավորներում: Հետևաբար, տվյալ պարագայում տպագրությանն առնչվող տեղեկությունները քաղում ենք այդպիսի տեղերից, իսկ դրանց անտեսումը կնշանակեր անտեղյակ մնալ այդ գրքի ստեղծման հանգամանքներից: Հակառակ այս ամենին, կան նաև այս տեսակ խորագրերով ծավալուն այնպիսի միավորներ, որոնց մեջ կան սուրբգրային մեջբերումներ, խոսվում է աստվածաբանական տարաբնույթ հարցերից, իսկ հիշատակարանային նյութը տարրալուծված է տարբեր տեղերում կամ զբաղեցնում է միայն վերջին մեկ կամ ավելի էջը: Ինչպե՞ս ենք վարվել այս դեպքում: Ամբողջը ներառնելու պարագայում առաջին հայացքից ուսումնասիրողը կարող է ձանձրանալ և չշարունակել ընթերցումը, մտածելով՝ թյուրիմացություն է, այնինչ իրեն հետաքրքրող նյութը կամ վերջում է, կամ, լավագույն դեպքում՝ էջեր հետո: Ամբողջապես չընդգրկելու պարագայում էլ խախտում ենք մեր աշխատանքի սկզբունքը: Այսուհանդերձ, ձիշտ վերաբերմունք ենք համարում ոչ հիշատակարանաբնույթ մասերը, անհրաժեշտ ծանոթագրությամբ բացատրելով, զանց առնելը:

Մի քանի հանգամանք ևս հաստատում են այս մոտեցման իրավացիությունը: Այսպես՝ «Հայ գրքի» Հ^{մբ} 186 (էջ 137) գրքի վերջում կա «Առ ընթերցողն» խորագրով մի քանի տողանոց հիշատակարանանման հատված, որի վերնագիրը «Հայ գիրքը» չունի, փոխարենը գրված է՝ էջ «384 Աղաչեմ զձեզ... Հիշատակագրություն»: Ահա մեջբերումը. **«Աղաչեմ զձեզ, եղբար՛ք, յիշեսցի՛ք միով Աստուած ողորմեայի զպատճառսն տրպեցման սորին, և զաշխատաւորսն գործարանիս: Քանզի մինչև ց՛ր»** այս վայր, որչափ Տաղարան որ տրպած է, սա հարուստ է և գեր ի վերոյ ամենեցուն»: Կամ «Հայ գրքի» Հ^{մբ} 76 (էջ 62) գրքի բովանդակության նկարագրությունն սկսվում է այսպես՝ էջ «3 չի. Տպեցաւ տառս... Տեղեկանք հրատարակության տարեթվի մասին». այս սկզբնատողով սկսվող հատվածը ևս կարելի էր հիշատակարան կամ հիշատակագրություն համարել. ահա՝ **«Տպեցաւ տառս աստուածային յամին, որ ի ծնընդենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հազար և վեց հարիւր և եօթանասուն, ի թուականութեանս Հայոց հազարի հարիւրի և տասն և ըննի, յԱլիկօնայ, ի փառս մեծագոյնս Աստուծոյ»** կամ նույն գրքի վերջում առկա հատվածը՝ **«Ներ տպարանում Սրբոյ Էջմիածնի, հաճութեամբ տեառն Ոսկանի արքեպիսկոպոսի հայոց, սրբագրութեամբ Կարապետի վարդապետի Անդրիանացոյ...»**: Վենետիկում Մխիթար Աբբաօր տպագրած Աստվածաշնչում (տե՛ս «Հայ գիրք», Հ^{մբ} 399, էջ 311) կա հետևյալ խորագրային համատեղումը՝ «Բան առ ընթերցողս և յիշատակարան մատենիս» (Աստուածաշունչ, 1733-1735, էջ 1271-1279), որի սկիզբը հիշատակարանային է՝ **«Շնորհիւ և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին յամի Տեառն 1735, յամսեանն**

Նոյեմբերի յանկ ելեալ աւարտեցաւ տպագրումն Աստուածաշունչ մատենիս...»: Հիշատակարանային տվյալներին զուգահեռ տպագրիչը զուգահեռներ է անցկացնում այս, Ոսկանյան Աստվածաշնչի և այլ օրինակների միջև, ուղղորդում ընթերցողին, խոսում իրենց կատարած աշխատանքի և այլնի մասին, իսկ Հ^մ 495 (էջ 392) գիրքն ունի «Առաջաբանություն առ ընթերցողս, որքան առ տպագրութեան սույն մատենիս» խորագիրը, որից հետևում է, որ Առաջաբանը տպագրությանն առնչվող տեղեկություններ ունի՝ «Թէպէտ գոլով արդեն իմ պարապեցեալ ի ծանրագոյն աշխատասիրութիւն՝ առ ի յարմարագրել նաև տպագրութեամբ ի լոյս ածել զբազմաց գովութեանց արժանի մատեանն, որ կոչի Գիրք օրինակաց և նմանութեանց, որ է որքան առ իս գործ իմն տաժանելի և կենաց հիւծանօղ: Բայց, սակայն, մինչ ստիպեցեալ եղէ ի հարկեցուցիչ աղաչանաց ոմանց ջերմեռանդ և առաքինասէր անձանց, զի նաև կցորդս առնիցէի մեծագունի աշխատանաց իմոց զյարմարագրութիւնն և զտպագրութիւնն սոյն ներկայ գրքոյս... Ուստի և կատարումն առնու բան Տեառն, որ ասացաւ ի Յօհ. 4.36. «Զի որ սերմանէն, և որ հնձէ հասարակ, ցնծացեն», որոյ սպասեալ ակնկալեմ յետնեցեալս ի յերամս բանասիրաց և անարժանագոյն ծառայս ծառայիցդ Աստուծոյ Սարգիս վարդապետ Կոստանդնուպոլսեան և արքեպիսկոպոս մեծի Կեսարեան» (հնատիպ գիրք, էջ 3, 5. չհ.): Նույն գրքի վերջում կա «Վերջաբանութիւն և յիշատակարան առ բանասէր անձինս ազգի մերոյ» վերնագրով հիշատակարանը՝ «...Վերջապէս աղաչեմ զբարեմիտ ընթերցասէրսդ առ ի ընթեռնուլ զսա ոչ միայն և եթ տեսական դիտաւորութեամբ առ ի գիտել և իմանալ միայն, այլ նաև գործնականաւ առ ի աշխատիլ և ջանալ ստացման կատարեալ առաքինութեան և ջերմեռանդ կենաց, որովհետև ըստ ասելոյն Պղատոնի «Ուստն առաքինութեան ոչ կարէ ծաղկիլ թարց աշխատութեան», և մինչ օգտիցիք ի սմանէ, զհոգևոր պտուղս առ Տէր յիշման արժանի համարեսցիք զհոգևոր և զմարմնաւոր ծնօղսն իմ, նաև զիս՝ զյետնեալս ի յերամս բանասիրաց, որ եմ պատրաստական ծառայ բարեպաշտութեան ձերում Սարգիս վարդապետ և արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի»¹⁴ (հնատիպ գիրք, էջ 331):

Վլ. Խամանայկական հանդես, ԺԶ (ԲԲ) տարի, թիվ 1 (85), հունվար-մարտ, 2024

14 Շրջանցելով Սարգիս (Սարաֆեան) վրդ. Կեսարեան և արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցու կենսագրական տվյալները՝ նշենք, որ նա Կեսարիայից Վենետիկ է գնացել 1744 թ. տպարան հիմնելու և գրքեր տպագրելու նպատակով, որը նրան հաջողվել է, իսկ կարճ ժամանակ անց միջոցների սղության պատճառով տպարանը փակվել է (նրա գործունեության մի շրջանի մասին Տե՛ս Հ. Ս. Զեմձեմեան, Մխիթար արքատիպի հրատարակչական առաքելությունը, Վենետիկ, Ս. Ղազար, 1980, էջ 104–106): Սարգիս Սարաֆյանի տպագրիչ լինելու հանգամանքի մասին «Հայ գրքուն» չի նշվում: Ըստ մեր ունեցած տվյալների՝ իր չորսամյա տպագրական գործունեության ընթացքում տպագրել է՝ 1. Սաղմոսարան, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1748

Կամ մեկ այլ՝ «Հայ գրքի» Հ^ր 369-ի (էջ 280) չհամարակալված 36-րդ էջում (ունի 36 չի, 76, 452, 94՝ = 658) երկայուն էջ) կա «Բան առ բարեւեր ընթերցողս» խորագրով հատված, որը ինքը՝ տպագրիչը, համարում է հիշատակարան և բացատրում, թե ինչու է այստեղ գրել. **«Ստուգապէս գիտեմ՝ անհաճելի գոլ զիրս ամենից վասն անյարմարութեան իւրոյ ոչ գիտեն, եթէ պատահմամբ իցէ եղեալ, քանզի ոչ գտանելով հնար ընդ տպագրին, որ թողլով դատարկ զերեսս թղթոյս, էանց առ միւսն՝ պատճառելով, եթէ այլապէս ոչ կարէր ըստ կերպի և ըստ եղանակի կանոնի իւրոյ, վասն որոյ ես, իհարկէ, իբր թէ բռնադատեցեալ գոլով, պարտ էի առնել զայս (թէպէտ անյարմար), որպէս զի առանց ուրուք արգելմանց հետևիցէր տպագրութեանս: Ապա՝ այսու ծաղրական և տղայական բանիւքս գիտելի լիցի համայնից պատահողաց սորին, թէ ընդէ՞ր զանց արարի շարադրել ի տեղուջ իւրում զգեղեցկայարմար յիշատակարան մի: Ըստ հասարակի սովորութեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ, զի թէպէտ անհմուտ և անտեղեակ գոլովս այսմիկ գործողութեան, բայց ամենայնիւ ջանիւ, մեծաւ զգուշութեամբ և վեցամեայ տքնութեամբ աշխատելով (ահա կարճ ի կարճոյ զեկուցումն), յետ որոյ սրբագան ժողովն հռոմէականի դէ Փրօփականդայ ֆիդէ հաւանեցաւ տպագրելոյ զՄիսալս: Հրամանաւ նոցին՝ ելեալ ի Հոսմայու գնացի ի Վէնէտիկ յամի Տեառն Ռ-Չի-Գ. (1723), և անդ գրեալ և թարգմանեալ՝ օրինակեցի ամբողջապէս՝ ամենևին համաձայնելով ընդ լատինացոց, վերատեսչութեամբ և վերաձանաչմամբ վերապատուելեաց հարց՝ Մխիթարայ արքայի և Խաչատրոյ վարդապետի, ըստ յանձնելոյ ասացեալ սրբոյ ժողովոյն, և զկնի եզերելոյ՝ վերստին դարձայ ի Հոսմ յա-**

(Հմր 494, էջ 391): 2. Ֆրանչիսկոս Սալեզացի. Ներածումն առ ջերմեռանդ կեանն, թարգմ.՝ Ղուկաս Խարբերդցու, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1748 (Հմր 495, էջ 392): 3. Կարլոյ Ռիտլի. Ճշմարտութիւն յաւիտենական, թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցու, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1750 (Հմր 509, էջ 401): 4. Յովհաննէս Սանձէմինեցի. Գիրք օրինակաց և նմանութեանց, թարգմ.՝ Ղուկաս Խարբերդցու, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1750 (Հմր 510, էջ 403): 5. Պատմութիւն վարուց Յօհաննու Ոսկերեքանի, թարգմ.՝ Գրիգոր Վկայասերի, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1751 (Հմր 524, էջ 411): 6. Պօղոս Սենտերան. Կրթութիւն ապաշխարողի, թարգմ.՝ Սարգիս Սարաֆյանի, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1751 (Հմր 525, էջ 412): 7. Էֆիմէրտէ, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1752 (Հմր 530, էջ 414): 8. Մովսէս Խորենացի. Պատմութիւն հայոց: – Աշխարհագրութիւն, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1752 (Հմր 532, էջ 415): 9. Նոր կտակարան, Վենետիկ, տպ. Աստոնի Բորտոլիի, 1751 (Հմր 523, էջ 411). վերջինս հիշատակարան չունի, Տե՛ս Տիտղոսաթերթ: Սարգիս Սարաֆյանի կյանքի և գործունեության մասին առավել մանրամասն Տե՛ս **Գալէմբեարեան հ. Գրիգորիս վ.**, Կենսագրութիւն Սարգիս արքեպ.ի Սարաֆեան և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1908 (Ազգային մատենադարան ԾԵ.):

մի Տեառն Ռ-ՉԻԳ. (1724): Եւ յետ բազում դժուարութեանց և վշտակրութեանց (թող զայլ նեղութիւնս, զորս մի ըստ միոջէ գրելն ձանձրութիւն է) սուրբ տարւոջն, որ էր թուին փրկչին Ռ-ՉԻԵ. (1725), սկսաւ գտպագրութիւնն մինչև ցամն Ռ-ՉԻԸ. (1728)...»: Այնուհետև շարադրանքից պարզ է դառնում, որ գրքի տպագրիչը և թարգմանիչը նույն անձն է՝ «...Իսկ երրորդ թարգմանութիւն և նորոգումն հանդերձ տպագրութեամբ եղև ի անարժան և չնչին կրօնաւորէ յետնագունեղէ ամենից կրօնաւորաց, անպիտան, անօգուտ և անտեղեակ բանից ի պատրի..... է (անվան փոխարեն 9 կետ)¹⁵ Խօշկաշինեցույ, ի յայնմանէ վերոյիշեցեալ կարգէ քարոզողաց և ի նոյնոյ գաւառէ: Արդ, խոնարհաբար մաղթելով ամենից պատահողաց սրբոյ մատենիս ներել և թողուլ տկարութեան իմում, սակս սխալանց (և թէ ինչ գտանիցի), թէ՛ ուղղագրութեանն և թէ՛ տպագրութեան, զի այսքան էր կարն իմ: Հուսկ յետոյ հայցեմ՝ ժտելով յամենեցունց, եթէ ախորժին կամք ձեր, զանպիտան ոչինչս արժանի առնել ի յիշումն բարոյ և յաղօթս, ապա թէ ոչ, գոնէ անբամբասանս և անբամահելիս թողուլ զիս վասն Քրիստոսի, ընդ որում Հօր և Հոգւոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ ի յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Այսպիսով՝ տպագրիչն ինքն էլ «Բան առ բարեսէր ընթերցողս» խորագրված շարադրանքը հիշատակարան է համարում:

«Հայ գրքի» Հ^{մբ} 297 (էջ 223) գրքի հիշատակարանի խորագրի ձևակերպումը ևս յուրահատուկ է՝ «Յիշատակարան և եզերառութիւն կարճառօտ մեկնութեանս աստուածազեն առիթ մատենիս՝ ի շարաբարդողէ առ ըստացողս սորին»: Սա կարելի է մեկնաբանել երկու կերպ՝ կամ հիշատակարանը և վերջաբանությունը միաձույլ են հանդես գալիս, կամ հիշատակա-

15 Ամենայն հավանականությամբ խոսքը Թովմաս Խոշկաշինեցու մասին է: Տիրոջ սաթերթի վրա կարդում ենք՝ «...առաքելական իշխանութեամբ հաստատեցեալ պատուականագունեղի հօր եղբօր Թօմայի ռիպօլ նոյնոյ կարգին ջէնէրալ վարդապետի հրամանան տպագրեցեալ...»: Թովմաս Խոշկաշինեցին (Իսավերտենց) ԺԸ. դ. կրոնական գործիչ էր, Նախիջևանի 12 կաթոլիկ գյուղերի գավառահայր, մեծ ներդրում է ունեցել ԺԸ. դ. թուրք-պարսկական պատերազմների ժամանակ Նախիջևանից 1000-ից ավելի կաթոլիկ հայերի տեղափոխման և Զմյուռնիայում բնակեցնելու գործում: 1723 թ. Իսալիայում տպագրել է տվել մի գիրք և թարգմանել մի Խորհրդատետր (1728): Հայ գրքում եղածի համաձայն Թովմաս Խոշկաշինեցու գրքերից ունենք միայն 1728 թ. իր թարգմանությամբ Խորհրդատետրը, որի և, ինչպես տեսանք մեջբերումից, տպագրիչն է: Ինչ վերաբերում է 1723 թ. տպագրած գրքին, ապա որևէ բան պարզել մեզ չի հաջողվել (Տե՛ս ԱյվազեանՆ. Ա., Նախիջևան, Պատկերագարդ բնաշխարհիկ հանրագիտակ, Երևան, Յուշարձան, Գիտութիւն, 1995, էջ 250, (ՀՀ կառավարությանն առընթեր հուշարձանների պահպանության վարչություն): Ի դեպ, սա որդին է վաճառական, բարեգործ Բունիաթ Խոշկաշինեցու, ում ծախսերով են տպագրվել Հայ գրքի Հմր 225 (էջ 160, 1706 թ.) և Հմր 609 (էջ 462, 1768 թ.) հնատիպերը:

րանը դիտարկվել է որպես գրքի վերջում դրված միավոր, որ է՝ եզերա-
նություն՝ ավարտ:

«Հայ գրքի» Հ^մ 420 (էջ 328) հնատիպում հիշատակարանային միա-
վորն ունի բոլորովին այլ խորագիր՝ «Յայտարարութիւն ինչ առ ընթերցող
եղբարսդ վասն սրբոյ մատենիս և հեղինակի սորին և տպեցմանն»: Տպագ-
րիչը նախ տեղեկացնում է Իգնատիոս Սկլեռնցու «Մեկնութիւն սրբոյ Աե-
տարանին, որ ըստ Դուկասու» գրքի գրության, այնուհետև տպագրության
նպատակի, ծախսը հոգացողի և այլ հանգամանքների մասին: Կարծում
ենք, սա ևս վերն արտահայտված մտքերի հաստատումն է: Որպես հավե-
լում նշենք, որ ձեռագիր մատյաններում էլ հանդիպել ենք նմանատիպ խո-
րագրերով հիշատակարանի, ինչպես՝ ձեռ. 9263, 2աբ՝ «Կանխաբանութիւն
առ արգոյ ընթերցողս ի սրբագրողէ» (վերջինս նաև գրիչն է):

**Փաստերով ներկայացրինք հիշատակարանների և հիշատակարա-
նաբնույթ հատվածների առնչությունները և վերջիններս պատրաստվող
ժողովածուի մեջ ընդգրկելու անհրաժեշտությունը: Այժմ փորձենք ցույց
տալ վերը հիշատակված խորագրերով միավորների մի մասը հիշատա-
կարանային համարելու մեր սկզբունքը և, ըստ այդմ՝ հիմնավորենք մեր
ժողովածուի մեջ այդպիսիք ընդգրկելու իրավացիությունը:**

Տարբերակումն արել ենք հետևյալ կերպ. ի մի ենք բերել վերը նշված
և նման խորագրերով հատվածները և ամբողջը խմբավորել այսպես՝

1. Հիշատակարանի գրության պահանջներին համապատասխանող
միավորներ. սրանք իրենց հերթին կարող են լինել՝

ա. Միավորներ, որոնք գրել են տպագրիչները կամ տպագրության
հետ կապ ունեցող անձինք (սրբագրիչ) և առնչվում են բուն հիշատակա-
րանների հետ՝ ունեն սրանց բնորոշ հատվածներ, ինչպես՝ տպագրության
թվականը, վայրը, գրքի լույս տեսնելու հետ ծագած դժվարությունները,
երբեմն էլ խոսվում է կատարած սրբագրական աշխատանքների մասին:
Իսկ օր.՝ «Հայ գրքի» Հ^մ 399-ում (էջ 311) նշվում է պատվիրատուի կամ
տպագրության հովանավորի անունը, կամ Հ^մ 249 (էջ 181) «Պարտեզ հոգ-
ևոր»-ի «Առ բարեպաշտ ընթերձողս»-ը և կամ Հ^մ 263 (էջ 191) «Սաղմոսա-
րան փոքրիկ»-ի «Առ բարեսէր ընթերցողս»-ը, որից է՝ «... **աւարտեցաւ յա-
մի Տեառն 1712 Նոյեմբերի 18 ըստ Հայոց, ի Վէնէտիկ քաղաքի: Զայս ի
լոյս ածին Զուղայեցի Շէրիմանեանք պարոն Նազարն, պարոն Շէրի-
մանն, մահտեսի պարոն Սարհատն, պարոն Յօհաննէսն, պարոն Պետ-
րոսն և պարոն Յակօբն՝ ի յիշատակ Շէրիմանեան խօջայ Սարհատի
որդոյ՝ վերապատուելոյ հօր իւրեանց՝ պարոն Մուրատին՝ առ Աստո-
ւած հանգուցելոյն...»:**

բ. Միավորներ, որ գրել են գրքի հեղինակները կամ թարգմանիչնե-
րը, հիշատակարանաբնույթ են, սակայն տպագրության հետ չեն առնչվում.

սրանք նման են նախագաղափար կամ թարգմանչի հիշատակարանի (սա այն դեպքում, երբ թարգմանիչը տպագրության ժամանակաշրջանում չէ և տպագրության հետ չի առնչվում)։ օրինակ՝ «Հայ գրքի» Հ^մ 37 (էջ 27)։ Տե՛ս Բովանդակություն։ Էջ ՄԻԹ-ՄԼԸ., որը նախագաղափար հիշատակարանի օրինակ է։ Կամ թարգմանչի գրչին պատկանող «Հայ գրքի» Հ^մ 85 (էջ 68) հնատիպում առկա «Առ ընթերցողս տրակ» և նույնի «Բան առ սրբուհի Աստուածածին»¹⁶ հատվածները և այլն։ Տպագրության հետ կապ չունենալու պատճառով նմաններն անտեսել ենք։

2. Հիշատակարանների հետ չաղերսվող միավորներ. վերջիններս ընդամենը տեղեկություններ են հաղորդում գրքի գրության, բովանդակության, թարգմանության նպատակի և այլնի մասին։ Այսպես՝ «Հայ գրքի» Հ^մ 190 (էջ 141) «Խոստովանարան» հնատիպի առաջաբանային հատվածը ընդամենը տեղեկացնում է գրքի հեղինակի և թարգմանչի մասին։ Մեկ այլ՝ «Հայ գրքի» Հ^մ 233 (էջ 169) «Գիրք մտածական աղօթից...» երկի «Ծանի՛ր, սիրելի՛ ընթերցող» և «Գլուխ առաջին. Առաջաբանություն» հատվածները հեղինակային են։ Օրինակները շատ են, սակայն, ինչպես նշեցինք, այս խորագրերն ունեցող և տպագրության ժամանակին չառնչվող, ինչպես նաև բովանդակությամբ ոչ հիշատակարանային հատվածները դուրս ենք թողել։ Փոխարենը տպագրության հետ կապ ունեցող այդ և նման խորագրերով հատվածները ներառել ենք ժողովածուի մեջ։

3. Միավորներ, որոնց ընդգրկել-չընդգրկելը ամենախնդրահարույցն է. դրանք պարունակող գրքի հեղինակը և տպագրության ժամանակը համընկնում են, և նյութի պարունակությունը, ասելիքի ոճը և ձևը դժվարություն են առաջացնում ընկալելու՝ այդ միավորի հեղինակը գիրքը գրո՞ղն է, թե՞ տպագրության հետ առնչվող մեկը։ Երբեմն էլ գրքի հեղինակը և տպագրիչը նույնանում են, ինչպես «Հայ գրքի» Հ^մ 359, 360 (էջ 271, 272) հնատիպերի դեպքում։ Սրանց հեղինակը և տպագրիչը նույն Մխիթար Սեբաստացին է։ Այս մասին գրված է Տիտղոսաթերթում։ Այս հանգամանքը նկատելի է նաև «Բան առ ընթերցողս» հատվածներում. ճիշտ է, չունենք տպագրության թվականի, վայրի նշումներ, սակայն կան կարևոր տեղեկություններ գիրքը գրելու հանգամանքի, նպատակի մասին, դիմում է ընթերցողին, խորհուրդներ տալիս նրան, վերջում էլ խնդրում «**սիրով ընդունիլ գդուզաքեայ աշխատանս մեր, գոր մեծաւ սիրով նուիրեմ սիրելեացդ։ Ողջ լերո՛ւք ի Տէր**» (Հայ գիրք, էջ 273)։ Իսկ սրանք հիշատակարանային տարրեր են։

Երբեմն արտահայտվում է նաև տպագրության հետ գրքի հեղինակի ունեցած կապը։ Օր. «Հայ գրքի» Հ^մ 111 (էջ 83) գրքի և նրա «Տրակ առ ըն-

16 Այս և այսպիսի խորագիր ունեցող հատվածների մասին կխոսենք ստորև։

թերցողս հայկազինս» հիշատակարանաբնույթ միավորի հեղինակը նույն Հովհաննես Հովով Կոստանդնուպոլսեցին է, ով այստեղ հիշում է նաև գիրքը տպագրել հորդորող մարդուն. «...**ուստի զգրգուկս զայս կարճառօտ խորհեցայ խոհեմապէս շարագրել և ի լոյս ածել... աղերսեմ ներիցէ ինձ դարձեալ ի փառս Աստուծոյ, քանզի ես ամենեցուն եմ ծանայ անպիտան Յոհաննէս Հովով: Աղաչեմ յիշել ի Քրիստոս միով Հայր մերիւ զուշիմագունեղ պատանին՝ զԿէրէք աղայն՝ զորդի պարոն Գրիգորի Կէրէքեան ճուղայեցոյ, ընտանեօք և ազգակցօքն հանդերձ, որ զիս, իբրև եղբայր սիրելի, յորդորեաց առ այս գործ բարի՝ սակս տեղեկանալոյ մասնկանցն հաւատոյ կաթուղիկէի եկեղեցոյն Քրիստոսի հռոմէականի և ճանաչելոյ զիսկութիւն նոցին, և դուք յիշեցեալք լիջիք ի Քրիստոսէ ի միւսանգամ գալստեան նորին. ամէն»:** Կամ «Հայ գրքի» Հ^{4ր} 245 (էջ 178) հնատիպի անխորագիր առաջաբան-մուտքից իմանում ենք, որ պատվիրատուն ինքն է գրել կամ իր անունից է գրել տվել, որտեղ, սակայն, նշված չեն տպագրության վայր, թիվ, տպագրիչ: Սկիզբը Հայաստանում քրիստոնեության լույսը տարածող առաքեալների և հեթանոսության համեմատ քրիստոնեության առավելության մասին է, այնուհետև «...**երևի, թէ այս է ձեզ հաճոյագոյն տրիտուր, այս է յարատևելն մեր ի պարգևի բազմաջան աշխատանօք ձերովք մեզ հաղորդեցելոյն: Վասն որոյ զՔարոզագիրքս այս, զշարադրեցեալն ի Խաչատրոյ Էրզրումեցոյ վերապատուելի վարդապետէ, որ է բան և քարոզ ի յաւետարանական վարդապետութիւնս՝ զվերալցեալն վկայութեամբք գրոց աստուածայնոց և վարդապետաց սրբոց, նուիրեմ զերազանցութեան ձերում՝ աղերսանօք հայցելով, զի արժանատրիցիք միջնորդութեամբ և բարեխօսութեամբ ձերով առնել, զի ընթերցօք սորին բորբոքիցին ի սէր առաքինութեանց, մտրակիցին առ գործս առաքինականս, անսայցեն ժողովման և հաւաքման արդեանց, և յետ աստի կենացս մտեալք ի սուրբ քաղաքն՝ ի վերին Երուսաղէմ, ժամանիցեն կենաց յաւիտենականաց և երանութեան մշտնջենատրի, ուր ընդ սուրբս և ընդ հրեշտակս դասակցեալք փառատրիցեն զամենասուրբ Երրորդութիւնն և զմի Աստուածութիւնն, և զամեներանեցեալ կոյսն Մարիամ ի յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Առաքելական սրբութեան ձերոյ նուաստագունեղ և ջերմեռանդագունեղ ծանայ, ի Տէր հանգուցեալ Սարիատի որդի Մուրատ Շէրիմանեան»:

Տիտղոսաթերթից իմանում ենք, որ Մուրատ Շերիմանյանը տպագրության ծախսերը հոգացողն է: Իսկ տպագրությունը հովանավորողը արդարացիորեն կարող էր հիշատակվել նաև հիշատակարանում: Այս հնատիպը հիշատակարան չունի: Մինևնույն ժամանակ ծախսերը հոգացողին

կարելի է նույնացնել նաև պատվիրատուի հետ: Չէ՞ որ ձեռագիր մատյանների դեպքում պատվիրատուն ինքն է հոգում իր պատվիրած ձեռագրի ծախսերը. այս մասին գրվում է ձեռագրի հիշատակարանում: Եթե ձեռագիր մատյանների դեպքում պատվիրատուն այն պատվիրում էր հիմնականում իր, երբեմն էլ որևէ եկեղեցու նվիրելու համար (մեկ կամ լավագույն դեպքում երկու ձեռագիր), ապա հնատիպ գրքի պարագայում հովանավոր-պատվիրատուն այն «նվիրում է» ընթերցողին (քանակն անհամեմատ ավելին է): Հետևաբար, կարծում ենք, այս և նմանօրինակ հատվածները ժողովածուից դուրս թողնելն արդար չի լինի:

Ի հավելումս սրա՝ նշենք, որ «Հայ գրքի» Հ^մ 363 (էջ 275) հնատիպում «Յիշատակարան տըպողի» հատվածին անմիջապես հաջորդում է տպագրիչի թողած մեկ այլ՝ «Յիշատակարան տպել տուղաց» հիշատակարան: Սա արդեն վստահաբար գրել է տպագրիչը՝ իր իսկ նախաձեռնությամբ: Այն կարող էր «Յիշատակարան տըպողի» միավորի անմիջական շարունակությունը լինել, սակայն տպագրիչը ցանկացել է հատուկ ուշադրություն հրավիրել գրքի տպագրությունը հովանավորողների, ծախսերը հոգացողների վրա՝ տալով նոր վերնագիր:

Երբեմն էլ հանդիպում են գրքեր, որոնց թարգմանիչը և տպագրության ժամանակն են գուգադիպում. օր.՝ «Հայ գրքի» Հ^մ 781 (էջ 587) «Բան թարգմանչին առ բարեսէր հայկազեան ընթերցող»ի հեղինակը, ինչպես խորագրից է երևում, թարգմանիչն է, ով Մխիթարյան միաբանության Տրիեստ-Վիեննայի ճյուղի անդամ Մինաս վարդապետ Գասպարյան Արդվինցին է¹⁷ (տե՛ս նաև Տիտղ.): Այստեղ թարգմանիչը խոսում է, թե ով առիթ եղավ գրքի թարգմանության և ում ծախսերով պիտի տպագրի. «... **Ջոր տեսեալ և փորձիւ հմտացեալ Ջուղայեցի Բաբիկեանց աղայ Յօհանէսն այրն պատուական՝ բարեսէր, բարերար առ ամենեսին և անչափ նախանձայոյզ պայծառութեան ազգին միանգամայն և սկզբնաշաւիղ երախտաւոր, և գօրավիզն Թրեստեանս հիմնարկութեան, առաջադրեաց մեզ թարգմանութեամբ ի լոյս ածել և ծախուք և արդեամբք իւրովք տպագրեալ ամենահարուստ գանձուցն, որ ի սմա բաժանորդ զազգն առնել...**»: Այնուհետև թարգմանիչը խոսում է գրքի թարգմանության հանգամանքների և այլնի մասին. այստեղ, սակայն, չունենք տպագրման թվական, վայր և այլ հիշատակարանային տվյալներ: Այնուամենայնիվ, կարծում ենք, այս և նման՝ տպագրության մասին հպանցիկ տվյալներ

17 Վերջինիս ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն: ԺԸ. դ. հայ լուսավորչական գործիչ, մաթեմատիկայի ուսուցիչ է, Մխիթարյան միաբանության անդամ: 1787 թ. հրատարակել է «Նոր գիտ կամ Գործ համարողական արիեստին» մաթեմատիկական ձեռնարկը վաճառականների համար (տե՛ս ՀՍ Հանրագիտարան, հտ. 7, էջ 554, ինչպես նաև՝ «Հայ գիրք», Հմր 803, էջ 602):

ունեցող միավորները ևս անհրաժեշտ է ներառնել, քանի որ ինչ-որ չափով առնչվում են տվյալ գրքի տպագրության պատմության հետ:

Այս առումով խնդրահարույց են նաև խորագիր ունեցող մի շարք այլ՝ գրքի մուտք ազդարարող հատվածներ: Խոսքը «Բան առ սրբուհի Աստուածածինն», «Բան առ Աստուած, առ տիրամայրն և առ սուրբս», «Պաղատանք առ Աստուածածին և առ սուրբս» և նման այլ հատվածների մասին է: Սկզբում այս միավորներն անտեսել էինք, սակայն հետագա անդրադարձը և ուշադիր քննությունը ցույց տվեցին, որ դրանք բացառելն այնքան էլ ձիշտ չէ: Բացի այդ, դրանք կարծես հիշատակարանային միավորի Փառատրական և Հիշեցե՛ք հատվածների համադրում լինեն. սրանց սկզբում գրիչը Տիրոջ և սրբերի գովաբանությունն է անում, այնուհետև սկսածն ավարտին հասցնելու համար գորություն և հաջող ընթացք է աղերսում, իսկ վերջում խնդրում է հիշել իրեն: Բերենք մի օրինակ. «Հայ գրքի» Հ^մ 269 (էջ 195). **«Պաղատանք առ Աստուածածին և առ սուրբս _ Գու, ո՛վ ստեղծող իմ և կեցուցիչ իմ, ապաւն իմ և Տէր իմ, օգնական իմ և նախախնամիչ իմ, որ օգնեցէր ինձ բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնի և ամենայն սրբոց քոց ի վերջ և ի կատարումն ածել զոմանս գրեանս յինչն շարագրեցեալս, տո՛ւր ինձ շնորհ և իմաստութիւն, և զօրութիւն, զի և զսա օգնականութեամբ քով երջանկապէս աւարտեցից ի փառս և ի պատիւ ամենամեծ անուան քո, ի փառս և ի պատիւ ամէնօրհնեալ կուսին Մարիամու և սրբոց և ի յօգուտ հայկազունեաց: Եվ դու՛ ամէնօրհնեալ սուրբ կոյսդ Մարիամ, մայրդ Աստուծոյ, միջնորդդ և բարեխօսդ առ Որդին քո միածին, վասն մարդկան մի՛ մոռանար զիս, այլ հանապազ յիշեա՛ զիս և լե՛ր ինձ օգնական յամենայնի և մանաւանդ յայսմիկ գործում նմանապէս, և դուք՝ սուրբք Աստուծոյ, օգնականք լերո՛ւք ինձ հանապազ բարեխօսութեամբ ձերով, մանաւանդ յայսմիկ գործում»:** Այստեղ մեկ ուրիշ խնդիր էլ կա. այդ հատվածները կարող են գրված լինել և՛ տպագրիչի, և՛ գրքի հեղինակի, և՛ կամ թարգմանչի ձեռքով. «Հայ գրքի» Հ^մ 85 (էջ 68) «Բան առ սրբուհի Աստուածածինն» թարգմանիչ Հովհ. Կոստանդնուպոլսեցու գրածն է (նաև՝ Հ^մ 93ի (էջ 72) «Բան առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեաց»), իսկ Հ^մ 87-ում (էջ 69) նույն անձը թե՛ գրքի հեղինակն է և թե՛ միաժամանակ նաև «Բան առ մանուկն Էմմանուէլ Յիսուս» հատվածի գրիչը:

Առավել բարդ է կողմնորոշվելն այն դեպքում, երբ գրքի հեղինակի կամ թարգմանչի և տպագրության ժամանակը համընկնում են, մանաւանդ՝ երբ հեղինակը խոսում է գիրքը տպել տալու կամ մեկենասի մասին: Ինչպե՞ս վարվել այս դեպքում: Կարծում ենք, ձիշտ է դրանք հիշատակարանային համարել, քանի որ, անկախ ամեն ինչից, այդտեղ խոսվում է տպագրության կամ այն տպել ցանկացողի, տպագրությունը հովանավոր-

րողի մասին: Ասվածի վառ օրինակ է «Հայ գրքի» Հ^մ 269ի (էջ 195) վերը բերված «Պաղատանք առ Աստուած, առ Աստուածածինն եւ առ սուրբս»-ը, որի գրիչը գրքի հեղինակ Խաչատուր Էրզրումեցին է, որը նաև «Առ ընթերցողս» հատվածի և «Շնորհօք և ողորմութեամբ...» սկսվածքով հիշատակարանի գրիչն է. շարադրանքում հիշատակվում է գրքի տպագրությունը հովանավորողն իր գերդաստանով և այլն: Գուցե ոմանք հակադարձեն՝ ասելով, թե իրավունք ունենք արդյոք «Պաղատանք...» և «Առ ընթերցողս» խորագրերն ունեցող հատվածները ներառնել ժողովածուի մեջ, քանի որ դրանք գրքի հեղինակի՝ Խաչատուր Էրզրումեցու ձեռքին են պատկանում, կպատասխանենք՝ այո, քանի որ հենց «Առ ընթերցողս»-ից ենք տեղեկանում, որ «...**փութով տպագրեցեալք եկին ի լոյս, և զայս ևս ջանացի ի լոյս ածել, ուստի խնդրեմ, զի որպէս գնոսա, այսպէս և զսա սիրով ընդունիցիք ի փառս և ի պատիւ արարչին, և զիս մի՛ մոռանայցէք: Ողջ լերո՛ւք ի Տէր մեր, և յիշեցէ՛ք զիս ի յաղօթս ձեր»**, իսկ հիշատակարանից իմանում ենք տպագրությունը հովանավորողի և նրա հետ կապ ունեցող այլ անձանց մասին (նման կասկածելի իրավիճակներում օգնութեան է հասնում Տիտղոսաթերթը): Իսկ այս դեպքում ինչո՞ւ ենք ընդգրկել «Պաղատանք առ Աստուած...»-ը. նշենք, որ այս և հաջորդ երկուսի միջև գործում է միմյանց շարունակելու տրամաբանական շղթան:

Այսօրինակ հատվածները հնատիպ գրքերում հանդիպում ենք 17-րդ դ. վերջին քառորդից՝ Հովհաննես Կոստանդնուպոլսեցու գրքերից սկսած: Իսկ ավելի վաղ գործածության հանդիպել ենք մեկ անգամ 1662-1663 թթ. Ամստերդամում տպագրված Ժամագրքում՝ «Մաղթանք առ Սուրբ Հոգին» վերնագրով: Նյութի բովանդակությանը, սակայն, հնարավոր չեղավ ծանոթանալ, քանի որ գրքի առկա օրինակը սկզբից և վերջից թերի է, իսկ նրա մյուս օրինակները Հայաստանից դուրս են:

Հավանաբար, սրանք ևս ընտրողաբար կներառենք:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ գրքի հեղինակը, թարգմանիչը և տպագրության ժամանակը համընկնում են, անկախ նրանից, թե այդ գրքերում առկա հիշատակարանները և հիշատակարանաբնույթ միավորները գրքի հեղինակի ձեռքով են գրված, թե տպագրիչի (իսկ հիմնականում դրանց գրիչը գրքի հեղինակն է), կարծում ենք, ճիշտ է հիշատակարանային համարել, քանի որ այս պարագայում դրանք նախագաղափար չեն, այլ տպագրության ժամանակի են և, բացի այդ, ինչպես տեսանք, գրքի տպագրության հետ ինչ-որ աղերսներ ունեն, ուստի այդպիսիք անտեսելն անտրամաբանական կլինի:

Ժողովածուի մեջ չեն մտնում այն հատվածները, որոնք տպագրության հետ առնչվում են միայն այնքանով, որ դրանք ընդամենը տպագրության հրամանագրեր կամ վկայագրեր են, որոնք տպագրողի կամ

գրքի հեղինակի (համընկնման դեպքում) շարադրանքը չեն, սրանց հեղինակը գիրքը տպագրել ցանկացողը կամ խորհուրդ տվողն է, և սրանք կարող են հորինված լինել նույնիսկ տպագրությունից մեկ, երկու և կամ ավելի տարիներ առաջ (օր.՝ «Հայ գիրք», Հ^մ 148 (էջ 112), Հ^մ 182 (էջ 134). և այլն):

Ինչպես արդեն նշել ենք, Առաջաբանություն, Նախերգանք, Վերջաբան, Եզերառություն և վերը նշված այլ խորագրերով բոլոր հատվածները չէ, որ հիշատակարանային բնույթի են, այլև՝ այդ վերնագրերով հատվածները կարող են ունենալ նաև այլ՝ հիշատակարանների հետ կապ չունեցող բովանդակություն: Մինչև ԺԹ. դ. առաջին քառորդը (գուցե փոքր-ինչ ավելի) շարունակվում է սրանց երկակի գործածությունը, այսինքն՝ այդ կամ նման վերնագրով հատվածները մի դեպքում կարող են հիշատակարանաբնույթ լինել, մեկ այլ դեպքում՝ ոչ: ԺԹ. դ. սկզբից, սակայն, արդեն նկատելի է դառնում այսպիսի խորագրերով հատվածների նվազում. բացի այս, աստիճանաբար կտրվում է նաև կապը հիշատակարանների հետ¹⁸: Ժամանակի ընթացքում դուրս են մղվում նաև «Ծանուցում...», «Բան առ ընթերցողս...», «Բան առ Սուրբ Հոգին...» և նման հատվածները, դեռևս պահպանվում են «Առաջաբան» և «Վերջաբանություն...» հատվածները: Հետագայում սրանց բովանդակության երկակի գործառույթը ևս փոխվում է, ձերբազատվում են հիշատակարաններին բնորոշ տեղեկություններից և աստիճանաբար ստանում են այն տեսքը, ինչպիսին այսօր են: Հիշատակարանային տարրերի փոխանցման միակ աղբյուրը մնում է Տիտղոսաթերթը:

Տիտղոսաթերթն ի սկզբանե եղել է տպագրության անբաժան մասը¹⁹: Ժամանակի ընթացքում այն զարգացում է ապրել: Սկզբնական շրջանում տիտղոսաթերթին նշվել է միայն գրքի խորագիրը, փոքր-ինչ ուշ՝ խորագրին զուգահեռ նշվել է նաև տպագրության վայրը և թվականը: Նման տվյալներով առաջին օրինակին հանդիպում ենք 1584 թ. «Տոմար Գրիգորեան»-ի տիտղոսաթերթին («Հայ գիրք», Հ^մ 14, էջ 12): Գրեթե նույն ժամանակահատվածում սրան զուգահեռ հանդիպում ենք նաև առավել ծավալուն, տեղեկություններով հարուստ տիտղոսաթերթերի: Համեմատության համար բերենք մեկական օրինակ.

1. Անուն գրոցս է / սուրբ Ուրբաթ/ագիրք («Հայ գիրք», Հ^մ 1, էջ 1, 1512 թ.):

2. Տոմար Գրիգորեանն / յաւիտենական, / որ եղել ի իշխանութեամբ / հրզօր սրբոյ փափոյն / եւ այլ թագաւ/որացն. / կազմեցաւ ի մեծըն Հռով-

18 Առայժմ ուսումնասիրել ենք 1800 թթ., հետո՝ տպագրված միայն առաջին տասնամյակի գրքերը, իսկ 1810 թ. հետոյի գրքերը նայել ենք մեկընդմեջ՝ զուտ պատկերացում ստանալու համար:

19 Որոշ ձեռագիր մատյաններ ևս տիտղոսաթերթեր ունեն:

մըն, ի քաղաքն սրբոց / առաքելոցն, ի թվի ՌՇՁԴ. / Romae / ex typographia Dominici Basae / MDLXXXIII («Հայ գիրք», Հ^մ 14, էջ 12, 1584 թ.):

3. Գիրք եւ սաղմոսք / Դաւթի /, որ եւ Սաղմոսարան կոչի: / Տպագրեալ եղեւ ի հայրապետութեանն / հայոց Տէր Փիլիպպոս Սրբա/զան կաթողիկոսի: / Հրամանաւ եւ կամօք երջանիկ / Խաչատուր վարդապետին Կեսարացոյ, / ձեռամբ եւ հոգացողութեամբ նուաստ / Յովհաննէս վարդապետի Զուղացոյ / յիւրում տպարանի, գոր կայա/ցոյց յիտալիա / ի վայելուչ քաղաքն եւ ի նաւահանգիստն ի Լիվոռնայ: Ի թվին ՌՂԳ. / յօժարութեամբ վերակացուաց («Հայ գիրք», Հ^մ 38, էջ 28, 1644 թ.)²⁰:

Որոշ դեպքերում տիտղոսաթերթն ավելի ծավալուն է դառնում, երբ այնտեղ հիշատակվում են թարգմանչի անունը, երբեմն՝ նպատակը, միաժամանակ Հայաստանի, Երուսաղեմի, Կոստանդնուպոլսի հոգևոր առաջնորդները և այլն: Նույնը, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե ասենք նաև տիտղոսաթերթի ձևավորման մասին: Ամենապարզ տիտղոսաթերթը չունի որևէ ձևավորում: Ժամանակի ընթացքում տիտղոսաթերթի գիրն առնվում է զարդաշքանակ(ներ)ի մեջ կամ ներքևում ունենում է որևէ զարդապատկեր: Կախված տպագրիչի կամ հովանավոր-պատվիրատուի հնարավորություններից՝ գիրքը կարող է ունենալ ավելի ճոխ ձևավորում. բացառություն չէ նաև տիտղոսաթերթը (երբեմն գիրքն ունենում է մեկից ավել տիտղոսաթերթ): Հաճախ հոգևոր բնույթի գրքերի տիտղոսաթերթերի ձևավորումը առավել հարուստ է, քան աշխարհիկ բնույթ ունեցողների: Այս առումով առավել աչքի են ընկնում որոշ Ավետարանական մեկնություններ («Հայ գիրք», Հ^մ 294, էջ 216, տպ.՝ Գրիգոր Մարզվանեցու), Շարակնոցներ («Հայ գիրք», Հ^մ 341, էջ 257, տպ.՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու), Ավետարաններ («Հայ գիրք», Հ^մ 253, էջ 185, տպ.՝ Էտկեար Գոդևանցու), Ծառոցներ («Հայ գիրք», Հ^մ 267, էջ 194, տպ.՝ Սարգիս դպրի), Տաթևացու Ձմեռան և Ամառան հատորները («Հայ գիրք», Հ^մ 454, էջ 363, Հ^մ 462, էջ 368., երկուսն էլ Աբրահամ Թրակացու տպարանի գործերն են) և այլն:

Մեր օրերի տիտղոսաթերթը թե՛ ձևավորմամբ, թե՛ ասելիքի պարունակությամբ տարբերվում է հնատիպ գրքերի տիտղոսաթերթերից: Այսօր դրանք առավել պարզ են, պարունակում են հեղինակի անուն-ազգանունը, գրքի խորագիրը, հրատարակչության անունը, տպագրության վայրը և տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում կարող են ունենալ նաև լրացուցիչ այլ տվյալներ:

20 Հնատիպը չենք տեսել. ուղղագրությունը և տողաբաժանումն՝ ըստ Հայ Գրքի:

Այսպիսով, կարծում ենք, արդարացված է հնատիպ գրքերի հիշատակարանների պատրաստվող ժողովածուի մեջ վերը թվարկած տեսակների հիշատակարանաբնույթ միավորներն ընդգրկելը:

Եզրակացություններ

1. Հայերեն հնատիպ գրքերը ստեղծվել են ձեռագիր մատյանների նմանողությամբ. ըստ այսմ՝ սրանք ևս ունեն հիշատակարաններ, որոնք համարվում են տվյալ գրքի ծննդականը:
2. Ձեռագիր մատյանների պարագայում հիշատակարանների տարբերակումն ավելի հստակ է, մինչդեռ հնատիպ գրքերում պատկերն այլ է: Այստեղ, բացի տպագիր հիշատակարաններից, կան մի շարք միավորներ՝ «Առաջաբան», «Առ ընթերցողսն», «Ծանուցում...», «Տրակ առ ընթերցողս», «Պատճառ և նախերգանք գրոցս», «Վերջաբանութիւն...» և այլ խորագրերով, որոնց մի մասը ունի հիշատակարանին բնորոշ տվյալներ. ինչպես՝ տպագրության թվականը, տպագրչի անունը, երբեմն նշվում է պատվիրատուի կամ մեկենասի անունը, խոսվում է սրբագրական դժվարին աշխատանքի, նաև տպագրությանն առնչվող այլ տվյալների մասին: Դրանք ավելի են կարևորվում հատկապես հնատիպ գրքում հիշատակարանի բացակայության պարագայում:
3. Վերոնշյալ խորագրերն ունեցող ոչ բոլոր միավորներն ենք հիշատակարանաբնույթ համարել: Այս այն դեպքում, երբ այդ հատվածները պատկանել են ոչ թե տպագրիչի կամ տպագրության հետ առնչվող անձի գրչին, այլ գրքի հեղինակին կամ թարգմանչին (ով տպագրության ժամանակակիցը չէ և չի առնչվում տպագրության հետ), որտեղ տեղեկություններ են տրվում գրքի գրության, բովանդակության և կամ թարգմանության նպատակի և այլնի մասին:
4. Հիշատակարանային բովանդակություն ունեցող, սակայն տպագրության հետ չառնչվող, այսպես ասած, նախագաղափար համարվող վերը նշված վերնագրերով միավորներն անտեսել ենք:
5. «Առաջաբան», «Առ ընթերցողսն», «Ծանուցում...», «Տրակ առ ընթերցողս», «Պատճառ և նախերգանք գրոցս», «Վերջաբանութիւն...» և նման այլ վերնագրերով միավորներից ընտրել ենք միայն նրանք, որոնք հիշատակարանաբնույթ են և պարունակում են գրքի տպագրության մասին տվյալներ:

Մարինե Պ. Սարգսյան – գիտական հետաքրքրության շրջանակներն ընդգրկում են հայոց լեզվի պատմություն, լեզվաբանություն, հայերեն

հնատիպ գիրք, ձեռագրագիտություն, բնագրագիտություն, աղբյուրագիտություն, մատենագիտություն բնագավառները: Զբաղվում է հայերեն հնատիպ գրքի տպագիր հիշատակարաններով և բնագրագիտական այլ աշխատանքներով:

Էլ. հասցե՝ MarineSargsyan1984@mail.ru

Summary

PRINTID COLOPHONS AND COLOPHON-TYPE UNITS

In the Armenian early printed books

Marine P. Sargsyan

Key words: early printed book, the Armenian language, colophon, manuscript, printed, title, printing house, publisher.

The early printed books were created in the imitation of manuscripts. So, they also have colophons, which are considered their birth certificates. While in the manuscripts it is easy to differentiate the colophons, in early printed books the picture is different. The early printed books, in addition to the printed colophons, also have a number of passages entitled “Preface”, “To the Reader”, “Notice...”, “Word to the Reader”, “The Reason and the Prelude of My Book”, “Epilogue...”, etc. Some of them contain data typical of colophons, such as the date of printing, the name of the publisher, sometimes the name of the customer or the patron. They may contain information on the complex proofreading process and other data related to the publication. They gain even more importance, when an early printed book lacks a colophon. However, not all units having such a title can be considered colophon-type. Sometimes these passages are not written by the publisher or a person connected with printing, but by the author or the translator (who do not have anything to do with printing), where we get information on why the book was written, what its content is or how and why it was translated, etc. We overlooked such colophons and chose only those that contain information about the printing of the book.

In this article, we tried to show the connection between the colophons and the colophon-type units, as well as the right to consider them as colophons.

ПЕЧАТНЫЕ КОЛОФОНЫ ПЕРВОПЕЧАТНЫХ АРМЯНСКИХ КНИГ

(и единицы колофонного типа)

Марине П. Саргсян

Ключевые слова – первопечатная книга, армянский язык, колофон, рукопись, древнепечатный, заглавие, типография, издатель-печатник.

Армянские первопечатные книги были созданы по подобию рукописей. У них также есть колофоны (памятные записи), которые считаются свидетельством о рождении книг. В случае рукописей легче различить колофоны, но в первопечатных книгах это не так. Первопечатные книги, помимо печатных колофонов, имеют также ряд разделов, озаглавленных «Предисловие», «К читателю», «Уведомление...», «Слово к читателю», «Причина и прелюдия к моей книге», «Эпилог...» и др. Некоторые из них содержат данные, характерные для колофонов, такие как дата издания, имя издателя, иногда упоминается имя заказчика или мецената, говорится о сложной корректорской работе и о других данных, связанных с изданием. В этом смысле такие единицы так же важны, как и колофоны. Они становятся еще более важными, когда в первопечатной книге отсутствует сам колофон. Однако не все разделы с такими заголовками могут иметь колофонское содержание. Иногда эти единицы принадлежат не печатнику или лицу, занимающемуся печатью, а автору или переводчику книги (кто не занимается печатью). В этом случае по ним мы узнаем, для чего книга была написана, что в ней содержится и для чего она написана, или как она была переведена и т.д. Единицы с вышеуказанными заголовками, имеющие колофонское содержание, но не связанные с изданием, мы не рассматриваем. Из всех единиц мы отобрали только те, которые имеют колофонское содержание и содержат информацию о печатании книги.

В этой статье мы попытались показать связь между такими единицами и самими колофонами, а также установить, правильно ли их условно считать колофонами.

Օգտագործված գրականություն

1. Այվազեան Ա. Ա., Նախիջևան, Պատկերագարի բնաշխարհիկ հանրագիտակ, Երևան, Յուշարձան, Գիտություն, 1995, էջ 250 (ՀՀ կառավարությանն առընթեր հուշարձանների պահպանության վարչություն):

2. **Բախչինյան Հ. Գ.**, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Եր., 1980:
3. **Գալէմքեարեան հ. Գրիգորիս վ.**, Կենսագրութիւն Սարգիս արքեպ.ի Սարաֆեան և Ժամանակին հայ կաթողիկէայք, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1908 (Ազգային մատենադարան ԾԵ.):
4. Հայ գիրքը 1512-1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, [կազմեցին]՝ **Ոսկանյան Ն. Ա., Կորկոտյան Ք. Ա., Սավալյան Ա. Մ.**, Եր, 1988:
5. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ. դդ., աշխ.՝ **Մաթևոսյանի Ա. Ս.**, Եր, 1988:
6. **Հարությունյան Խ. Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր, 2019.
7. **Խաչիկեան Լ. Ս.**, ԺԷ. դ. հայերէն ձեռագրերի յիշատակարանների առաջին հատորը. Աշխատութիւններ, հատ. Ա. , Եր. , 1995, էջ 334-372:
8. **ձեմձեմեան Հ. Ս.**, Մխիթար արքեպօր հրատարակչական առաքելությունը, Վենետիկ, Ս. Ղազար, 1980:
9. **Մաթևոսյան Ա. Ս.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրներ, Եր, 1998.
10. **Սարգսյան Մ. Պ.**, Հայերեն հնատիպ գրքերի հիշատակարանների քննարկի մշակման հարցեր, Էջմիածին, 2017, ԺԱ., էջ 137-148:

REFERENCES

1. **Ayvazean A.**, Nakhijevan, Patkerazard bnashkharhik hanragitak, Yer., Yushardzan, Gitut'yun, 1995, էջ 250, (HH Karavarut'yann arēnt'er hushardzanneri pahpanut'yan varch'ut'yun). **(in Armenian)**.
2. **Bakhchinyan H. G.**, Haykakan dzeragreri yishatakarannerē, Yer., 1980. **(in Armenian)**.
3. **H. S. Chemchemyan**, Mkhit'ar abbahor hratarakch'akan arak'elut'yunē, Venetik, S. Ghazar, 1980. **(in Armenian)**.
4. **Galēmk'carean h. Grigoris v.**, Kensagrut'yun Sargis ark'ep.i Sarafean ew zhamanakin hay kat'oghikeank', Vienna, Mkhit'arean tparan, 1908 (Azgayin matenadaran TSE.). **(in Armenian)**.
5. Hay girk'ē 1512-1800 t'vakannerin, hay hnatip grk'i matenagitut'yun, [kazmetsin] **Oskanyan N. A., Korkotyan K', A., Savalyan A., M.**, Yer., 1988. **(in Armenian)**.
6. Hayerēn dzeragreri yishatakarannerē. YE-ZHB. dd., ashkh. **Mat'ewosyan A. A.**, Yer., 1988. **(in Armenian)**.
7. **Harut'yunyan Kh. A.**, Hayerēn dzeragreri yishatakarannerē, Yer., 2019. **(in Armenian)**
8. **Khach'ikyan L. S.**, “ZHĒ. dari hayerēn dzeragreri yishatakaranneri arajin hatore”, Ashkhatut'yunner, h. A., Yer., 1995, էջ 334-372. **(in Armenian)**.
9. **Mat'ewosyan A. A.**, Hayerēn dzeragreri yishatakarannerē hay mshakuyt'i usumnasirut'yan skzbnaghbyurner, Yer., 1998. **(in Armenian)**.
10. **Sargsyan M. P.**, Hayeren hnatip grk'eri hishatakaranneri bnagreri mshakman harts'er, “Ējmiatsin”, 2017, ZHA., էջ 137-148. **(in Armenian)**.